


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՅՈՒՆԱՄԱԽԱՆԱԿ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԼՈՎԻՉ
ԼԻՍԻՑԻԱՆ

СТЕПАН ДАНИЛОВИЧ
ЛИСИЦИАН

ԵՐԵՎԱՆ - 1987





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ.

ՏՈՒԽԱՄԵՆՏԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

№ 41

ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼԻ ԼԻՍԻՑՅԱՆ

Ներածականը Ս. Տ. Երեմյանի, Դ. Ս. Վարդումյանի
Մատենագիտությունը կազմել է Լ. Մ. Վարդանյանը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1987

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУЧНАЯ БИБЛИОТЕКА

МАТЕРИАЛЫ К БИОБИБЛИОГРАФИИ УЧЕНЫХ
АРМЯНСКОЙ ССР

№ 41

СТЕПАН ДАНИЛОВИЧ
ЛИСИЦИАН

Вступительная статья С. Т. Еремяна, Д. С. Вардумяна
Библиография составлена Л. М. Варданян

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1987

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության
և տնտեսագիտության բաժանմունքի բյուրոյի երաշխավորությամբ
և ֆունդամենտալ գիտական գրադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն կ ո լ ե զ ի ա

Ս. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ (նախագահ), Հ. Գ. ԹԱԿԻԱՎԱԶՅԱՆ,
Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Վ. Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Печатается по рекомендации бюро отделения
истории и экономики АН АрмССР
и по решению ученого совета
Фундаментальной научной библиотеки
АН АрмССР

Редакционная коллегия


С. А. ВАРДАНИЯН (председатель), О. Г. БАКЛАВАДЖЯН,
Г. Б. ГАРИБДЖАНИЯН, Р. М. МАРТИРОСЯН, В. С. НАЛБАНДЯН


Ответственный редактор: Д. С. ВАРДУМЯН

4503010000

1 ————— 93—97
703 (02) — 87

© Հայկական ՍՍՀ ԳԱ երաժշագրակություն, 1987





ՊՐՈՅԵՍՈՐ ՍՏԵՓԱՆ ԴԱՆԻԵԼԻ ԼԻՍԻՑՅԱՆԻ
ԿՑԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԽՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Ստեփան Դանիելի Լիսիցյանը ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 23-ին,
Թիֆլիսում։ Վախճանվել է 1947 թ. հունվարի 4-ին, Երևանում։
1884 թ. ավարտել է Թիֆլիսի առաջին արական գիմնազիան։
1889 թ. ավարտել է Վարշավայի համալսարանի պատմաբանասիրական
ֆակուլտետը և ստացել թեկնածուի գիտական աստիճան։
1889—1891 թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։
1892—1898 թթ. աշխատակցել է «Աղրյուր» և «Տարագ» հանդեսներին։
1892—1903 թթ. «Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերության» խըմ-
րագրության անդամ և գարտուղար։
1894—1915 թթ. դասավանդել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում։
1898—1921 թթ. Թիֆլիսի Կատարինե Լիսիցյանի հայկական տարրական
կրկնու դպրոցի Շաւուցիլ (1898—1904 թթ.), դիրեկտոր (1904—
1911 թթ.), այդ դպրոցի հիմքի վրա ստեղծված պեղողիմնազիայի,
ապա՝ զիմնազիայի ուսուցիլ (1911—1916 թթ.), դիրեկտոր (1916—
1921 թթ.)։
1904 և 1910—1911 թթ. գիտական նպատակներով եղել է եվրոպական
մի շարք երկրներում (Ավստրիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ֆրանսիա),
կա Պուստում։
1905—1917, 1922 թթ. Խմբագրել և հրատարակել է «Հասկեր» մակա-
կան հանդեսը։
1921—1924 թթ. Թիֆլիսի աշխատանքային № 22 դպրոցի (1921—1922),
ապա № 18 տեխնիկումի (1922—1923), այնուհետև № 16 գումա-
նիտար տեխնիկումի (1923—1924) դիրեկտոր։
1922—1936 թթ. Թիֆլիսի Կովկասյան պատմահնագիտական ինստիտու-
տի գիտական աշխատակից (1928—1936 թթ.) արտահաստիքային։
1924—1947 թթ. Երևանի պետական համալսարանի դասախոս, 1937—
1947 թթ. Ֆիզիկական աշխարհագրության ամբիոնի վարիլ։

- 1925—1928 թթ. Հայկական ՍՍՀ լուսմողկոմատի կենտրոնական գավառագիտական բյուրոյի գիտական քարտուղար:
- 1925—1929 թթ. Հայկական ՍՍՀ լուսմողկոմատին կից Երևանի կուսդպրոցի ուսուցիչ:
- 1928—1947 թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի գարիչ:
- 1935—1947 թթ. Հայկական աշխարհագրական ընկերության վարչության անդամ, 1937—1939 թթ.՝ նույն ընկերության նախագահի տեղակալ:
- 1938—1942 թթ. ՍՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից:
- 1938—1943 թթ. Երևանի Հայկական մանկավարժական ինստիտուտի դասախոս:
- 1941 թ. Հնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:
- Պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով՝ ծննդյան 75 և գիտամանկավարժական գործունեության 50-ամյակի կապակցությամբ:
- 1945 թ. Հնորհվել է Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:
- Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:
- Ծննդյան 80-ամյակի կապակցությամբ Ստ. Լիսիցյանի անունով է կոչվել Երևանի № 34 միջնակարգ դպրոցը:
- 1946 թ. Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի ժամանակ 1941—1945 թթ. աշխատանքային արիության համար» մեդալով:
- Պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով՝ Երևանի պետական համալսարանի 25-ամյակի կապակցությամբ:
- 1947 թ. Ստ. Լիսիցյանի անունով է կոչվել Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնը:
- 1980 թ. Ստեփան և Սրբուհի Լիսիցյանների անունով է կոչվել Հայկական ՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական արխիվ-կարինետը:

ОСНОВНЫЕ ДАТЫ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ПРОФЕССОРА СТЕПАНА ДАНИЛОВИЧА ЛИСИЦИАНА

- Степан Данилович Лисициан родился 23 сентября 1865 г. в Тифлисе. Скончался 4 января 1947 г. в Ереване.
- 1884 г. Окончил Тифлисскую первую мужскую гимназию.
- 1889 г. Окончил историко-филологический факультет Варшавского университета и получил ученую степень кандидата.
- 1889—1891 гг. Преподаватель Эчмиадзинской духовной семинарии.
- 1892—1898 гг. Сотрудничал в журналах «Ахбюр» и «Тараз».
- 1892—1903 гг. Секретарь и член редколлегии «Тифлисского армянского издательского общества».
- 1894—1915 гг. Преподаватель Тифлисской армянской семинарии Нерсисян.
- 1898—1921 гг. Учитель армянской начальной частной школы Ка^птарине Лисициан (1898—1904), директор (1904—1911), учитель созданной на основе указанной школы прогимназии, впоследствии гимназии (1911—1916), директор (1916—1921).
- 1904 и 1910—1911 гг. Поездки в ряд европейских стран (Австрия, Швейцария, Германия, Чехия), в Константинополь с научной целью.
- 1905—1917, 1922 гг. Редактор и издатель детского журнала «Аскер» (Колосья).
- 1921—1924 гг. Директор Тифлисской трудовой школы № 22 (1921—1922), затем техникума № 18 (1922—1923), позже гуманитарного техникума № 16 (1923—1924).
- 1922—1936 гг. Научный сотрудник Кавказского историко-археологического института в Тифлисе (в 1928—1936 гг. внештатный).

- 1924—1947 гг. Преподаватель Ереванского гос. университета, в 1937—1947 гг. заведующий кафедрой физической географии.
- 1925—1928 гг. Ученый секретарь Центрального бюро краеведения при Наркомпросе АрмССР.
- 1925—1929 гг. Преподаватель Ереванской партшколы при Наркомпросе АрмССР.
- 1928—1947 гг. Заведующий отделом этнографии Гос. музея истории Армении.
- 1935—1947 гг. Член правления Географического общества АрмССР, в 1937—1939 гг. заместитель председателя того же общества.
- 1938—1942 гг. Старший научный сотрудник Института истории Армянского филиала АН СССР.
- 1938—1943 гг. Преподаватель Ереванского армянского педагогического института.
- 1941 г. Присвоено ученое звание профессора.
- Награжден Почетной грамотой Верховного Совета АрмССР в связи с 75-летием со дня рождения и 50-летием научно-педагогической деятельности.
- 1945 г. Присвоено почетное звание заслуженного деятеля науки Армянской ССР.
- Награжден орденом Трудового Красного Знамени.
- В связи с 80-летием именем Ст. Лисициана названа Ереванская средняя школа № 34.
- 1946 г. Награжден медалью «За доблестный труд в Великой Отечественной войне 1941—1945 гг.».
- Награжден Почетной грамотой Верховного Совета АрмССР в связи с 25-летием Ереванского гос. университета.
- 1947 г. Именем Степана Лисициана назван этнографический отдел Гос. музея истории Армении.
- 1980 г. Именем Степана и Србун Лисицианов назван научный кабинет-архив Института археологии и этнографии АН АрмССР.

անձնի և երիվայրելու պայմանները թ. Ա. Ա. 1231
առաջնապահողի մաքսանդրութեան և նորային բարե-
անդամութեան մաս առաջնապահութեան և նորային մաքսա-
անդամութեան մաս է նորային մաքսանդրութեան և նորային

ԿՅԱՆՔԻ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՒԽԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրո-
ֆեսոր Ստեփան Դանիելյանը սովետահայ ականա-
վոր գիտնականների ավագ մերժգից է, գիտնականներ, որոնց
բազմակողմանի գործունեությունը լայն ճանաչում է գտել
դեռևս անցյալ դարի վերջերին։ Իր կյանքի գրեթե 60 տա-
րին նա նվիրել է գիտությանը և հայ ժողովրդի լուսավորու-
թյանը։

Ստեփան Դանիելի կիսիցյանը ծնվել է 1865 թ. սեպտեմբերի 23-ին, Թիֆլիսում, բժշկի զնտանիքում։ 1884 թ. Թիֆլիսի առաջին արական գիմնազիան ավարտելուց և նեկ տարի անց նա ընդունվում է Նովոռոսիյսկի համալսարանի (Օդեսայում) պատմաբանաբարության ֆակուլտետը, իսկ 1887 թ. երրորդ կուրսից փոխադրվում է Վարչավայի համալսարանի նույն ֆակուլտետը, որն ավարտում է 1889 թ.։ Նույն տարում Հրավիրվում է Վաղարշապատ (Էջմիածին)՝ որպես Գևորգյան ճոկուր ճեմարանի ուսուցչ գրականության դասախոս, սակայն երկու տարի անց մեղմարանի ուսուցչ գրականության դասախոս մեջ և հեռաժմում, ճեմարանից

1891 թ. Ս. Դ. Լիսիցյանը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ ծավալում է մանկավարժական, հրատարակչական, գրական, գիտական և հասարակական լայն գործունեություն։ Գրական, գիտական և հասարակական լայն գործունեություն։

Մի քանի տարի Ս. Դ. Լիսիցյանն աշխատակցում է «Տարազ» շաբաթաթերթին, 1892—1893 թթ. գլխավորելով նաև խմբագրական-հրատարակչական աշխատանքը։ Միաժամանակ, որպես մանկական գրող և թարգմանիչ, ակտիվորեն աշխատակցում է հայկական «Աղբյուր» մանկական պատկերազարդ պարբերական հանդեսին, որն իր շուրջն էր համախմբել հայ գրողների, մանկավարժների և հասարակական գործիչների մի փայլուն համաստեղություն։

Ս. Դ. Լիսիցյանն Անդրկովկասում հայ հրատարակչական գործի կազմակերպիչներից էր։ Տասը տարուց ավելի (1892—1903 թթ.) նա «Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերության» խմբագրական կոլեգիայի քարտուղարն է եղել։ Ընկերությունը ժամանակին նշանակալի դեր է խաղացել հայերի մշակութային կյանքում։ Կառավարության կողմից այն փակվելուց հետո Ս. Դ. Լիսիցյանը կազմակերպում է «Ստ. Լիսիցյան և ընկերություն» հրատարակչական ֆիրման (1903—1905 թթ.), որը կոչված էր հայերեն լեզվով հրատարակելու եվրոպական առաջադեմ և հայ դասական գեղարվեստական գրականության երկերը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ս. Դ. Լիսիցյանը հրատարակչական ֆիրման ամբողջությամբ տրամադրում է հայ գրողների «Կովկասի հայոց հրատարակչական ընկերությանը»՝ մինչև 1921 թ. մնալով դրա ակտիվ անդամը։

Թիֆլիսում Ս. Դ. Լիսիցյանը ծավալում է նաև եռանդուն մանկավարժական գործունեություն։ 1894 թ. աշխատանքի

Հրավիրվելով Ներսիսյան դպրոց, մինչև 1915 թ. անընդմեջ դասավանդել է պատմական առարկաներ:

Ս. Դ. Լիսիցյանը վաղուց էր ձգտում ստեղծել իր դրաբ-
րոցը, ինչպես նաև մանկական հանդեսը, և միայն 1898 թ.
թույլտվություն է ստանում իր տիկնոջ հետ բացելու հայ-
կական երկսեռ տարրական դպրոց, որը ցարիզմի պայման-
ներում հազվագեց երեսվթ էր: 1911—1921 թթ. դպրոցն
ունեցել է գիմնազիայի կարգավիճակ և իրավունքներ: Վրաս-
տանում սովետական կարգեր հաստատվելուց հետո այն,
նախ, վերափոխվում է աշխատանքային դպրոցի, իսկ հե-
տագայում՝ տեխնիկումի, ըստ որում, Ս. Դ. Լիսիցյանը մը-
նում է այդ հաստատովթյունների անփոփոխ տնօրենը և
պատմության ուսուցիչը:

Օգտագործելով ձեռք բերած փորձն ու գիտելիքները,
նա ձգտել է գործնականում իրականացնել ուսուցման առա-
ջադիմ՝ գաղափարները և մեթոդները՝ հաշվի առնելով տե-
ղական պայմանների առանձնահատկությունները:

Ս. Դ. Լիսիցյանի մանկավարժական-լուսավորչական
գործունեության մյուս կարևոր կողմը՝ «Հասկերի»՝ արևելա-
հայերի մեջ հետագայում լայն ճանաշում ստացած մանկա-
կան հանդեսի հրատարակումն էր (1905—1917, 1922 թթ.)։
Ս. Դ. Լիսիցյանին հաջողվում է հանդեսի շուրջը համախմբել
հայ գրականության և արվեստի նշանավոր ներկայացուցիչներին (Հ. Թումանյան, Ավ. Խաչակրյան, Ալ. Շիրվանջաղին,
Ղ. Աղայան, Հ. Հովհաննիսյան, Վ. Փափազյան, Ա. Խնկոյան,
Հ. Հայրապետյան, Գ. Բաշինջաղյան, Վ. Սուրենյանց, Փ.
Թերլեմեզյան, Ե. Թադևոսյան, Վ. Ախիկյան և ուրիշներ)։
որոնցից շատերն իրենց ստեղծագործական ուղին սկսել են
հենց «Հասկերից»։ Ս. Դ. Լիսիցյանը ոչ միայն խմբագրում

և հրատարակում էր ամսագիրը, այլև հանդես գալիս որպես մանկական գրող ու թարգմանիչ՝ հայ պատանի ընթերցողին հաղորդակից դարձնելով համաշխարհային գրականության ժառանգությանը:

Ս. Դ. Լիսիցյանի գրական հակումները բավականին վաղ են գրակավում: *Տակավին 1884 թ.*, գիմնազիան ավարտելուց անմիջապես հետո, նա գրում է «Քաջ զինվորները» մանկական պիեսը, որը ու միայն նրա անդրանիկ ստեղծագործությունն էր, այլև այդ բնույթի առաջին նշանակալի գործը հայ գրականության մեջ:

Առանձնապես հայտնի դարձավ «Հասկերում» տպագրոված նրա «Հայրենի առասպելներից և վեպերից» պատմվածքների շարքը, որը հետագայում լույս տեսավ առանձին գրքով (վերամշակված 1940 թ.), իսկ «Արու Հասանի մաշիկները» հեքիաթը դարձավ քրեստոմատիական, բազմիցս վերահրատարակվելով նաև սովետական շրջանում:

Մեծ է «Հասկերի» դերը մանկավարժական կադրերի մի ամբողջ սերունդ պատրաստելու գործում: Ամսագրի «Մանկավարժական գրադարան» հավելվածում (26 պրակ) Ս. Դ. Լիսիցյանը հանդես է եկել որպես ոռուսերենից և եվրոպական լեզուներից մանկավարժության ու մանուկների դաստիարակության հարցերին վերաբերող հոդվածների թարգմանիչ:

Ս. Դ. Լիսիցյանի գիտամանկավարժական գործունեության մեջ որոշակի տեղ ունի 1907—1922 թթ. Հ. Թումանյանի և Լ. Շանթի հետ համատեղ Թիֆլիսում հրատարակած I—V դասարանների հայոց լեզվի «կուսաբեր» դասագիրքը: «Կուսաբերում», որը հիմնված էր ժամանակի ամենաառաջադիմ գիտամանկավարժական գաղափարների վրա և ընդհանրացնում էր XIX դ. երկրորդ կեսի նախորդ դասագրքերի

լավագույն փորձը, զգալի չափով արտացոլված էին Լիսից-յանի գիմնազիայում կիրառվող դեմոկրատական կրթության և դաստիարակության սկզբունքները: «Հուսաբերը» մեծ դեր խաղաց հայ երեխաների կրթության ու դաստիարակության գործում և երկար ժամանակ օգտագործվում էր տարրեր երկրների հայկական դպրոցներում, իսկ Անդրկովկասում 1907—1922 թթ. հայոց լեզվի գրեթե միակ դասագիրքն էր: Ս. Դ. Լիսիցյանն իրականացրեց «Հուսաբերի» հրատարակությունը նաև արևմտահայերեն գրական լեզվով, Կոստանդնուպոլսում, որտեղ լույս տեսավ 1911 թ. մինչև 1950-ական թթ. կեսերը: Ուսուցման մեթոդիկայի կատարելագործման առումով մեծ դեր խաղացին «Հուսաբերին» կից ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ «Հուսաբերի ուղեցույցը» և «Գրավոր վարժությունները»:

Գիտամանկավարժական և հրատարակչական գործունեությունը Ս. Դ. Լիսիցյանը զուգակցում էր գրականագիտական աշխատանքի հետ: Դեռ XIX դ. վերջներին նա հանդես եկավ մի շարք գրականագիտական աշխատություններով՝ «Հայ գրականությունը և իրականությունը» (1893 թ.), «Մուս գրականության ուղղությունները XVIII դարում և XIX դարի սկզբում» (1899 թ.), 1899 թ. լույս է տեսնում Ս. Դ. Լիսիցյանի «Պուշկինը, նրա կյանքը և գործունեությունը (ծննդյան 100-ամյակի առթիվ)» մենագրությունը, իսկ ավելի ուշ (1937 թ.)՝ «Պուշկինը Հայաստանում» հոդվածը, որին հեղինակը կցում է իր կազմած՝ Ա. Ս. Պուշկինի երգրում կատարած ճանապարհորդության երթուղու քարտեզը:

«Տարագ» հանդեսում Ս. Դ. Լիսիցյանը հրապարակում է գրական-քննադատական բնույթի մի շարք հոդվածներ և գրախոսություններ:

Ս. Դ. Լիսիցյանի գրականագիտական գործումեռլիուն-
անխզելիորեն կապված է եղել նրա թարգմանչական գործու-
նեռլիուն հետ։ Լինելով՝ գիտության և արվեստի առաջադեմ-
գաղափարների զատագով, նա ձգտել է թարգմանություննե-
րի միջոցով հայ ընթերցողին հաղորդակից դարձնել ժամա-
նակի նորագույն տեսություններին, ուստի և արտասահման-
յան գրականության լավագույն նմուշներին, միաժամանակ
հայագիտության նվաճումները ժողովրդականացնելով Ռու-
սաստանում։ Ազատ տիրապետելով ոռւսերենին, ուկրաի-
ներենին, բելոռուսերենին, վրացերենին և օտար լեզուների
(անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, լեհերեն), ինչ-
պես նաև լատիներենին և հին հունարենին, Ս. Դ. Լիսից-
յանը բազմաթիվ թարգմանություններ է կատարել գիտական-
և մանկավարժական գրականությունից։ Հատկանշական է նրա-
մասնակցությունը Խ. Ֆ. Լինչի «Հայաստան» երկհատոր աշ-
խատության անգլերենից ոռւսերեն գիտական թարգմանու-
թյան իրականացմանը։ Զ. Դարվինի ուսմունքի պրոպագանդ-
մանը և ժողովրդականացմանը ծառայեցին Ս. Դ. Լիսիցյանի-
թարգմանած աշխատությունները՝ Ա. Ռուլեսի «Հրաշալի դա-
րը» (անգլերենից), Կ. Տիմիրյանի «Դարվինը և նրա ուս-
մունքը», Ե. և Դ. Լուբոցկիների «Կենդանիների և մարդու
հոգին», Ա. Նեշանի «Ստորերկրյա ուժերի աշխատանքը» և
այլն։

Ս. Դ. Լիսիցյանի թարգմանած գեղարվեստական գործե-
րի շարքում ուշագրավ է Հ. Սենկելի «Յո՞ երթաս» վեպը,
որը թարգմանել է բնագրից և հրատարակել հեղինակի կեն-
դանության օրոք, 1898 թ.։ Հաջորդ հրատարակության հա-
մար (1912 թ.) նա գրել է նախարան՝ լեհ նշանավոր գրողի՝

Այսանքի ու ստեղծագործության մասին և կազմել ծանոթագրություններ։ Թարգմանությունն այնքան հմտորեն է արված, որ մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունը (սովետական շրջանում վերահրատարակվել է երկու անգամ)։

Ս. Դ. Լիսիցյանի բազմարնույթ ժառանգության մեջ հատուկ տեղ է հատկացվում նրա գիտական ոգորումներին և Հայաստանում ազգագրական ու աշխարհագրական գիտությունների զարգացման գործում ներդրած վաստակին։

Գիտական աշխատանքի նկատմամբ Ս. Դ. Լիսիցյանի հակումն ու ունակութունը դրսեռը վել է շատ վաղ՝ տակավին ուսանողական տարիներին, իսկ առաջին պրատումները սկսել է եզմիածնի Գեորգյան ճեմարանում, այնուհետև՝ Թիֆլիսում։

Մի շարք արտասահմանյան երկրներում (Ավստրիա, Շվեյցարիա, Գերմանիա, Զեխիա և այլն) գտնվելու ընթացքում (1904 և 1910—1911 թթ.) Ս. Դ. Լիսիցյանը, դպրոցական ուսուցման նորագույն մեթոդներին ծանոթանալու և «Հուսարերի» արևմտահայերեն տարրերակի նախապատրաստման հետ մեկտեղ, աշխատում է Վիեննայի Միխիթարյան միաբանության գրադարանում, Բեռլինի, Կոստանդնոպոլսի և այլ թանգարաններում՝ Հայաստանի պատմությանը վերաբերող աղբյուրների, ինչպես նաև Վանից և այլ տեղերից լեման-Հառապտի բերած հնագիտական նյութերի վրա։

Անգրկովկասում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ս. Դ. Լիսիցյանն ամբողջովին նվիրվում է գիտական գործունեությանը, այն զուգակցելով բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդելու։

1924 թ. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կառավարության հրավերով Ս. Դ. Լիսիցյանը

Թիֆլիսից տեղափոխվում է Երևան, որտեղ սկսվում է նրա գործունեության մի նոր, բեղմնավոր շրջան։ Երևանի նորաստեղծ համալսարանում Ս. Դ. Լիսիցյանը 1924 թ. մինչեւ կյանքի վերջը (1947 թ.) կարդում է Հայաստանի և Անդրկովկասի ֆիզիկական ու պատմական աշխարհագրության (քարտեզագրական նյութի օգտագործմամբ), իսկ հետագայում նաև ազգագրության դասընթացներ, ղեկավարում է ասպիրանտների աշխատանքը, դասավանդում ՀՍՍՀ լուսժողկոմատին կից Երևանի կուսդպրոցում և Երևանի հայկական մանկավարժական ինստիտուտում (1938—1943 թթ.):

Որպես ՀՍՍՀ լուսժողկոմատին կից մեթոդական խորհըրդի անդամ և կենտրոնական գավառագիտական բյուրոյի գիտական քարտուղար, Ս. Դ. Լիսիցյանը 1920-ական թթ. մեծ դեր է խաղացել հանրապետությունում գավառագիտական աշխատանքի կազմակերպման գործում։ Նրա ակտիվ մասնակցությամբ Սովետական Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում ստեղծվել է գավառագիտական կազմակերպություններից ցանց, որի նպատակասլաց աշխատանքի համար նա կազմել և հրատարակել է մի շարք հրահանգներ։

Հատկապես մեծ է Ս. Դ. Լիսիցյանի ներդրումը ազգագրական գիտության կազմակերպման և զարգացման գործում։ Նա հիրավի համարվում է սովետահայ ազգագրության հիմնադիրը։ Այդ ասպարեզում նրա մեջ զուգակցվել են անխոնչ հետազոտողը և գիտության հմուտ կազմակերպիչը։

Ազգագրությամբ Ս. Դ. Լիսիցյանն սկսել է զբաղվել դեռ 1920-ական թվականներին՝ մինչև 1930-ական թթ. կեսերը լինելով Թիֆլիսի կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի (ԿՊՀ) գիտական աշխատակից։ Այդ տարիներին նա

ինստիտուտի հանձնարարությամբ ձեռնարկել և իրականացրել է մի շարք ազգագրական գիտարշավներ՝ հարուստ դաշտային նյութեր հավաքելով ինչպես տեղաբնիկներից, այնպես էլ գաղթական հայերից։ Այդ հետազոտությունների արդյունքը հոդվածների շարքն էր ԿՊՀ-ի «Էրաբերում» և «Բյուլետենում»՝ նվիրված մասնավորապես հայ գյուղական բնակարանին և դրա յուրահատկությանը Հայաստանի տարրեր պատմա-ազգագրական շրջաններում։ Ս. Դ. Լիսիցյանն առաջինն ուշադրություն դարձրեց գյուղական տան՝ «գլխատան» ճարտարապետական կառուցվածքի և հայոց պաշտամունքային կառուցյների ծագումնաբանական ընդհանություններին։

1928 թ. Ս. Դ. Լիսիցյանը նշանակվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ և գլխավորում այն մինչև կյանքի վերջը։ Հենց այդ շրջանին է վերաբերում նրա ակտիվ գործունեությունը հանրապետությունում ազգագրության կազմակերպման և գարգացման ուղղությամբ։ Թանգարանային ցուցանմուշներ հավաքելու և հավաքածուները համարելու համար Ս. Դ. Լիսիցյանը 1930-ական թթ. կազմակերպում է ազգագրական գիտարշավներ Սովետական Հայաստանի տարրեր շրջանները, ինչպես նաև հարակից հանրապետությունների հայաբնակ վայրերը։ Լավ գիտակցելով ընթացիկ պահի առանձնահատկությունը (ավանդութային մշակույթի տարրեր երևությների արագ վերափոխումը 1920—1930 թթ. սոցիալիստական շինարարության շրջանում), Ս. Դ. Լիսիցյանն ազգագրական նյութի գրանումը համարում էր առաջնահերթ և անհետաձգելի խնդիր։ Այդ նպատակով գիտարշավներին զուգընթաց նա տեղերում թղթակիցների լայն ցանց է ստեղծում։ Շնոր-

Հիվ Ս. Դ. Լիսիցյանի բացառիկ եռանդի, խանդավառության, հարուստ գիտելիքների և կազմակերպչական ընդունակությունների, թանգարանի ազգագրության բաժինը կարճ ժամանակամիջոցում հարստացավ արժեքավոր հավաքածուներով, որոնց լիակատարության, ընդգրկման լայնության, ինչպես նաև գիտական բարձր մակարդակով կազմած և համակարգված քարտարաններով, այն դարձավ երկրի նման պրոֆիլի առաջատար հիմնարկություններից մեկը:

Հայ ազգագրության զարգացման մեջ անգնահատելի ներդրում է Ս. Դ. Լիսիցյանի կազմած «Ազգագրական հարցաբանը», որը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցավ և ահա արդեն շորս տասնամյակ ի վեր ծառայում է որպես կարևոր մեթոդական ձեռնարկ. այն հրատարակվեց հեղինակի մահվանից երկու շաբաթ առաջ և շամես կտակ հանդիսացավ Հայաստանի ազգագրագետների նոր սերնդի համար» (Հ. Կուտիկյան):

1930—1940 թթ. Ս. Դ. Լիսիցյանն ավարտում է հայ ազգագրությանը վերաբերող հիմնարար աշխատությունների շարադրումը: Պատրաստված լինելով տպագրության հեղինակի կողմից, դրանք լույս տեսան հետմահու, տարբեր ժամանակներում:

Ազգագրական նյութի հավաքման ուղղությամբ կատարած բազմամյա աշխատանքի և Հայաստանի առանձին պատմապատրական շրջանների ուսումնասիրության արդյունքները շարադրված են նրա «Զանգեզորի հայերը» և «Էեռնային Ղարաբաղի հայերը»: Ազգագրական ակնարկ» մենագրություններում: Դրանց գիտական արժեքը, նախ և առաջ, որոշվում է հազվագյուտ դաշտային նյութերով, որը հեղինակը

Հավաքել է 1920-ական թթ. կեսերին (Լեռնային Ղարաբաղ) և 1930-ական թթ. սկզբներին (Զանգեզուրի շրջաններ)՝ առաջին հեղափոխական տասնամյակների բարդ ժամանակաշրջանում։ Սովետահայ ազգագրության մեջ առաջին անգամ առանձին պատմաազգագրական շրջաններ ենթարկվել են հատուկ մասնագիտական ուսումնասիրության։

Անխոնց և մանրակրկիտ հետազոտող Ս. Դ. Լիսիցյանը լուսաբանեց նշված շրջանների հայերի տնտեսական, հասարակական և հոգեոր կյանքի բոլոր կողմերը, բացահայտեց դրանց տեղական առանձնահատկությունները, միաժամանակ ցույց տալով պատմամշակութային ընդհանրությունը հայ էթնոսի հետ ամբողջությամբ վերցրած։

Ս. Դ. Լիսիցյանի հիմնարար աշխատություններից է նաև «Ակնարկներ նախահեղափոխական Հայաստանի ազգագրության» մենագրությունը, որտեղ ի մի են բերված սովետահայ ազգագրության նվաճումները և հնարավոր ամբողջությամբ ներկայացված է հայոց նյութական ու հոգեոր մշակույթի, տնտեսական զբաղմունքների ու սոցիալական կյանքի ընդհանուր պատկերը՝ էթնիկ առանձնահատկություններով։

Ս. Դ. Լիսիցյանի նշված աշխատանքներն զգալի չափով օգտագործվել են այնպիսի կարևոր կոլեկտիվ աշխատության մեջ, ինչպիսին է «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Հայկական Սովետական սոցիալիստական հանրապետության ժողովուրդները» բաժինը «Կովկասի ժողովուրդները» հատորում։

Ս. Դ. Լիսիցյանը, իր հետազոտություններում ընդհանրապես և Հայաստանի ազգագրությանն ու պատմությանը վերաբերող աշխատություններում մասնավորապես, առանձնահատուկ տեղ է հատկացրել Հայկական լեռնաշխարհի և

Հարկան շրջանների աշխարհագրությանը, անձամբ ուսումնասիրելով հանրապետության բոլոր շրջանները: Նրա բազմամյա գործունեության արգասիքը «ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն: Դեմոգրաֆիայով» աշխատությունն է, որտեղ հանգամանորեն ներկայացված են Սովետական Հայաստանի տեղագրությունը, կլիման, ջրագրությունը, հողերը, բուսական և կենդանական աշխարհը, բնակչությունը և վարչական բաժանումը: Սեղմ և հակիրճ ոճով գրված այս ձեռնարկը տվյալ հարցին վերաբերող նյութի առաջին մշակումներից է (իսկ ամբողջ Հայկական լեռնաշխարհի ընդհանուր տեսությունը մնաց ձեռագիր): Նա հրապարակեց նաև պատմաշխարհագրական բնույթի մի շարք հոդվածներ («Մոկսի պատմական աշխարհագրության շուրջը», «Պոմպեոսի ուղին Անդրկովկասում», «Կիմմերական ներարշավի ուղին Անդրկովկաս» և այլն):

Նշանակալից է Ս. Դ. Լիսիցյանի դերը Հայկական ՍՍՀ աշխարհագրական ընկերության կազմակերպման գործում: Որպես նրա ստեղծման նախաձեռնողներից մեկը, Ս. Դ. Լիսիցյանը 1935 թ. մինչև կյանքի վերջն ակտիվորեն մասնակցել է ընկերության գործունեությանը:

Երկար տարիների ընթացքում Ս. Դ. Լիսիցյանը հարուստ նյութ է հավաքել նաև հայոց պատմության, հատկապես աքեմենյանների, սելևկյանների և հռոմեացոց տիրապետության ժամանակաշրջանների վերաբերյալ: Այդ հետազոտությունների արդյունքն են պատմական բնույթի մի շարք հոդվածներ, ինչպիսիք են՝ «Տիգրան Մեծն ըստ դրամների», ինչպես նաև վերը նշված պատմաաշխարհագրական աշխատանքները: Նա առաջինը վերծանեց Գառնիի հումարեն ար-

ձանագրությունը, իսկ ավելի վաղ տվեց Զանգեզուրի կրոմ-լեխների պատմական մեկնաբանությունը («Ղոշուն-Դաշի մեգալիթյան բնակատեղին Սիսիանում»):

Ս. Դ. Լիսիցյանի բազմակողմանի գործունեությանը հատուկ է ուսումնասիրվող երևութների մեկնաբանման պատմականությունը: Բոլոր երևութները շարժման, զարգացման մեջ տեսնելու ձգտմամբ է պայմանավորված նրա գիտական հետաքրքրությունների լայն ընդգրկումը:

Գիտամանկավարժական գործունեության ասպարեզում և կադրերի պատրաստման գործում ունեցած վաստակի համար Ս. Դ. Լիսիցյանին 1941 թ. շնորհվել է պրոֆեսորի, իսկ 1945 թ.՝ ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում: 1945 թ. պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Նույն թվի հոկտեմբերին լայնորեն նշվել է գիտնականի ծննդյան 80-ամյակը, իսկ Երևանի № 34 միջնակարգ դպրոցը կոչվել է Ս. Դ. Լիսիցյանի անվամբ: 1946 թ. պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմի ժամանակ 1941—1945 թթ. աշխատանքային արիության համար» մեդալով, բազմիցս նաև՝ ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով:

Ստեփան Դանիելի Լիսիցյանը վախճանվեց 1947 թ. հունվարի 4-ին, Երևանում:

Նշանավոր գիտնականի և մանկավարժի հիշատակը հավերժացնելու նպատակով նրա մահից անմիջապես հետո Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրության բաժնին տրվեց Ս. Դ. Լիսիցյանի անունը, ինչպես նաև սահմանվեցին անվանական թոշակներ Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի ուսա-

նողների և ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտ-ների համար: 1980 թ. Ս. Դ. Լիսիցյանի և նրա դստեր՝ գի-տության վաստակավոր գործիչ Մըբուհի Մտեփանի Լիսից-յանի անունով կոչվեց ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգա-գրության ինստիտուտի գիտական կարինետ-արխիվը:

Ս. Դ. Լիսիցյանն իր երկարամյա կյանքը և ավելի քան կեսդարյա գործունեությունը նվիրաբերեց Հայաստանում հա-յագիտության, ազգագրության, աշխարհագրության և ման-կավարժության զարգացմանը, հիմնարար աշխատություն-ներով անգնահատելի ավանդ ներդնելով հայ նյութական և հոգևոր մշակույթի գանձարանը:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

КРАТКИЙ ОЧЕРК ЖИЗНИ, ПЕДАГОГИЧЕСКОЙ, НАУЧНОЙ И ОБЩЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Заслуженный деятель науки Армянской ССР, профессор Степан Данилович Лисициан принадлежит к старшему поколению выдающихся армянских советских ученых, чья разносторонняя деятельность приобрела широкую известность еще в конце прошлого века. Почти 60 лет своей жизни он посвятил служению науке и просвещению армянского народа.

Степан Данилович Лисициан родился 23 сентября 1865 г. в Тифлисе в семье врача. Окончив в 1884 г. Тифлисскую первую мужскую гимназию, он через год поступил на историко-филологический факультет Новороссийского университета (в Одессе), а в 1887 г. перешел с третьего курса на тот же факультет Варшавского университета, который закончил в 1889 году. В том же году он был приглашен в г. Вагаршапат (ныне Эчмиадзин) на должность преподавателя русской литературы в духовной семинарии Геворкян, но через два года был обвинен в организации выступления студентов против администрации, за что и был уволен из семинарии.

В 1891 г. С. Д. Лисициан переезжает в Тифлис, где разворачивает большую педагогическую, издательскую, литературную, научную и общественную деятельность.

На протяжении ряда лет С. Д. Лисициан сотрудничает в еженедельнике «Тараз», в 1892—1893 гг. возглавляет также его редакторско-издательскую работу, одновременно, как детский писатель и переводчик активно сотрудничает в иллюстрированном журнале «Ахбюр»—армянском детском периодическом издании, собравшем в разные годы вокруг себя блестящую плеяду армянских писателей, педагогов и общественных деятелей.

С. Д. Лисициан является одним из организаторов армянского издательского дела в Закавказье. На протяжении более чем десяти лет (1892—1903 гг.) он был секретарем редакционной коллегии «Тифлисского армянского издательского общества», сыгравшего видную роль в культурной жизни армян того периода. После его закрытия властями С. Д. Лисициан организовал издательскую фирму «Ст. Лисициан и товарищество» (1903—1905 гг.), в которой занялся изданием на армянском языке произведений передовой европейской литературы, а также армянской классики.

После Февральской революции С. Д. Лисициан передал все имущество и денежные средства своей издательской фирмы «Кавказскому издательскому обществу» армянских писателей и вплоть до 1921 года был активным его членом.

В Тифлисе С. Д. Лисициан развертывает также большую педагогическую деятельность. В 1894 г. он был

приглашен в семинарию Нерсисян на должность преподавателя исторических дисциплин, где проработал беспрерывно до 1915 года.

С. Д. Лисициан давно стремился создать свою школу, а также детский журнал, и лишь в 1898 г. вместе со своей супругой добился разрешения на открытие начальной армянской школы с совместным обучением детей обоего пола, что было редким явлением в условиях царизма. В период 1911—1921 гг. школа имела статус и права гимназии. После установления Советской власти в Грузии она была преобразована сначала в трудовую школу, затем в техникум, причем С. Д. Лисициан оставался неизменным директором этих учебных заведений и преподавателем истории.

Используя накопленный опыт и знания, он всячески стремился осуществлять на практике передовые идеи и методы обучения, с учетом специфики местных условий.

Другой, не менее важной стороной педагогического-просветительской деятельности С. Д. Лисициана явилось издание им детского журнала «Аскер» (Колосъ) (1905—1917, 1922 гг.), получившего широкое признание среди восточных армян. С. Д. Лисициану удалось собрать вокруг журнала видных представителей армянской литературы и искусства (Ов. Туманян, Ав. Исаакян, Ал. Ширванзаде, Г. Агаян, О. Иоаннисян, В. Папазян, А. Хнкоян, А. Айрапетян, Г. Башинджагян, В. Суренянц, П. Терлемезян, Е. Татевосян, В. Ахикян и др.).

многие из которых начинали свой творческий путь именно в журнале «Аскер». Сам С. Д. Лисициан, помимо редактирования и издания журнала, выступал на его страницах как детский писатель и переводчик, приобщая юных армянских читателей к наследию мировой литературы.

Литературные наклонности С. Лисициана проявились довольно рано. Еще в 1884 г., сразу после окончания гимназии, он написал пьесу для детей «Храбрые воины», явившуюся не только его первым произведением, но и первым значительным произведением подобного рода в армянской литературе. Наибольшую известность получила печатавшаяся в журнале «Аскер» серия рассказов С. Д. Лисициана «Из родных легенд и преданий», вышедшая впоследствии в переработанном виде отдельной книгой (1940 г.), а сказка «Башмаки Абу-Гасана» стала хрестоматийной, выдержав ряд изданий и в советское время.

Велика роль журнала «Аскер» в подготовке целого поколения педагогических кадров. В выходящей приложением к журналу «Педагогической библиотеке» (26 вып.) С. Д. Лисициан выступал переводчиком с русского и ряда европейских языков статей по вопросам педагогики и воспитания детей.

Определенное место в научно-педагогической деятельности С. Д. Лисициана занимают издаваемые им совместно с Ов. Туманяном и Л. Шантом в 1907—1922 гг. в Тифлисе учебники армянского языка «Лусабер» для I—V классов. В «Лусабере», основанном на самых пе-

редовых научных и педагогических идеях своего времени и обобщающем лучший опыт предыдущих учебников второй половины XIX в., в значительной мере находил отражение опыт демократического образования и воспитания, применяемый в гимназии Лисициан.

«Лусабер» сыграл большую роль в деле образования и воспитания армянских детей. Долгое время им пользовались практически во всех армянских школах разных стран света, а в Закавказье с 1907 г. до 1922 года «Лусабер» оставался почти единственным учебником армянского языка. С. Д. Лисициан осуществил также издание «Лусабера» на западноармянском литературном языке в Константинополе, где он начал выходить с 1911 г. вплоть до середины 50-х годов. В усовершенствовании методики преподавания большую роль сыграли методические учебные пособия — «Руководство к «Лусаберу» и «Письменные упражнения».

Научно-педагогическую и издательскую деятельность С. Д. Лисициан сочетал с литературоведческой работой. Еще в конце XIX в. он выступил с рядом литературоведческих трудов: «Армянская литература и действительность» (1893 г.), «Направления русской литературы XVIII—начала XIX вв.» (1899 г.). В 1899 г. выходит в свет монография «Пушкин, его жизнь и деятельность (к 100-летию со дня рождения)», а позднее — статья «Пушкин в Армении» (1937 г.), к которой автор прилагает составленную им самим географическую карту маршрута путешествия поэта в Арзрум.

На страницах журнала «Тараз» С. Д. Лисициан публикует ряд статей и рецензий литературно-критического содержания.

Литературоведческая деятельность С. Д. Лисициана была неразрывно связана с переводческой. Активный сторонник и пропагандист всего прогрессивного в науке и искусстве, он стремился посредством переводов приобщить армянского читателя к передовым научным идеям и теориям своего времени и к лучшим образцам русской и зарубежной литературы, одновременно популяризируя достижения арменоведения в России. Свободно владея русским, украинским, белорусским, грузинским и рядом иностранных языков (английский, немецкий, французский, польский), а также латинским и древнегреческим, С. Д. Лисициан делал многочисленные переводы научной и педагогической литературы.

Среди научных переводов следует отметить его участие в осуществлении перевода с английского на русский язык двухтомного труда Х. Ф. Линча «Армения». Пропаганда и популяризации учения Ч. Дарвина среди армянской общественности послужили переведенные С. Д. Лисицианом работы: А. Уоллеса «Чудесный век» (с английского), К. Тимирязева «Дарвин и его учение», Е. и Д. Лубоцких «Душа животных и человека», популяризации естествознания — книга А. Нечаева «Работа подземных сил».

Среди художественных переводов С. Д. Лисициана привлекает внимание роман Г. Сенкевича «Камо гряде-

ши?», переведенный им с оригинала и изданный им же при жизни автора в 1898 г. Для следующего издания (1912 г.) он написал предисловие к книге о жизни и творчестве видного польского писателя и составил комментарии к тексту. Перевод этот выполнен на столь высоком уровне, что не утратил своего значения и в наши дни (в советское время переиздан дважды).

В многогранном наследии С. Д. Лисициана особое место принадлежит научным изысканиям и большому личному вкладу в организацию и развитие этнографической и географической наук в Армении.

Склонность и способности к научной работе выявились у С. Д. Лисициана довольно рано, еще на студенческой скамье. Свои научные изыскания он начинает осуществлять в Эчмиадзинской духовной семинарии Геворкян, а затем в период жизни в Тифлисе.

Во время пребывания (1904 и 1910—1911 гг.) в ряде зарубежных стран (Австрия, Швейцария, Германия, Чехия и др.) С. Д. Лисициан, наряду с ознакомлением с новейшими методами школьного преподавания и подготовкой западноармянского варианта «Лусабера», много работал в библиотеке Конгрегации венских мхитаристов, в берлинском, константинопольском и других музеях над первоисточниками по истории Армении, а также над археологическим материалом, вывезенным Леманном-Гауптом из Вана и других мест.

После установления Советской власти в Закавказье, С. Д. Лисициан целиком посвящает себя научной

деятельности, сочетая ее с преподаванием в высших учебных заведениях.

В 1924 г. по приглашению правительства Армянской Советской Социалистической республики С. Д. Лисициан из Тифлиса переезжает в Ереван, где начинается новый, плодотворный этап его деятельности. В Ереване, во вновь созданном университете, С. Д. Лисициан с 1924 г. до конца своей жизни (1947 г.) читал курс физической и исторической географии Армении и Закавказья (с использованием картографического материала), а впоследствии также и этнографии, руководил работой аспирантов, преподавал в Ереванской партшколе при Наркомпросе АрмССР (1925—1929 гг.) и в Ереванском армянском педагогическом институте (1938—1943 гг.).

Будучи членом методического бюро при Наркомпросе АрмССР и ученым секретарем Центрального краеведческого бюро, С. Д. Лисициан сыграл в 1920-ые годы большую роль в деле организации краеведческой работы в республике. При его активном участии была создана сеть краеведческих организаций практически во всех районах Армении, а для их целенаправленной работы им самим составлен и опубликован ряд обстоятельных инструкций.

Особенно велик вклад С. Д. Лисициана в организацию и развитие этнографической науки. Он по праву считается основоположником советской армянской этнографии. На этом поприще в нем сочетались пытливый

исследователь, многоопытный практик и умелый организатор.

Этнографией С. Д. Лисициан начал заниматься еще в 1920-е годы, являясь до середины 1930-х годов научным сотрудником Кавказского историко-археологического института (КИАИ) в Тифлисе. В эти годы он, по заданию Института предпринимает ряд научных экспедиций по сбору этнографического материала как на местах, так и записывая его со слов армян-беженцев. Результатом этих исследований явилась серия его статей в «Известиях» и «Бюллетенях» КИАИ, посвященных, в частности, истории крестьянского жилища армян и его специфике в различных историко-этнографических районах Армении. С. Д. Лисициан первым обратил внимание на архитектурную конструкцию крестьянского дома — «глхатуна» — и его генетическую общность с армянскими культовыми сооружениями.

В 1928 г. С. Д. Лисициан был назначен заведующим этнографическим отделом Гос. исторического музея Армении, который он возглавлял до конца своей жизни. Именно к этому периоду относится его активная деятельность по организации и развитию этнографической науки в республике. Для сбора музейных экспонатов и пополнения коллекций С. Д. Лисициан в 1930-е годы систематически и планомерно организовывает этнографические экспедиции в различные районы Советской Армении, а также армянские поселения за ее пределами. Огромное значение он придавал также сбору и фиксации полевого этнографического материала. Прекрас-

но сознавая специфику текущего момента (стремительную трансформацию различных явлений традиционной культуры в период коренных социалистических преобразований в 1920—1930 гг.), С. Д. Лисициан считал запись этнографического материала первоочередной и безотлагательной задачей. С этой целью, наряду с экспедиционным исследованием, он налаживал на местах широкую корреспондентскую сеть. Благодаря исключительной энергии, энтузиазму, большим познаниям и организаторским способностям С. Д. Лисициана, этнографический отдел музея за довольно короткий срок обогатился ценностями коллекциями, полнота и широта охвата которых наряду с составленными на высоком научном уровне, систематизированными каталогами вскоре сделали его одним из ведущих учреждений страны подобного профиля.

Неоценимым вкладом в развитие армянской этнографии явился составленный С. Д. Лисицианом «Этнографический вопросник», который имел огромное теоретическое и практическое значение и вот уже на протяжении четырех десятков лет служит методическим руководством. Вышедший в свет за две недели до кончины автора, он «явился как бы завещанием новому поколению этнографов Армении». (Кусикьян).

В 1930—1940 гг. С. Д. Лисицианом были завершены основополагающие труды по армянской этнографии. Подготовленные к печати самим автором, они вышли в свет в разное время уже посмертно.

Плоды многолетних трудов по сбору этнографического материала и изучению отдельных историко-этнографических областей Армении изложены в двух значительных его работах: «Армяне Зангезура» и «Армяне Нагорного Карабаха. Этнографический очерк». Их научную ценность прежде всего определяет ставший уже уникальным полевой материал, собранный автором в середине 1920-х (Нагорный Карабах) и в начале 1930-х (районы Зангезура) годов в важный и сложный период первых послереволюционных десятилетий. Впервые в армянской советской этнографии отдельная историко-этнографическая область была подвергнута специальному этнографическому исследованию. Неутомимый и кропотливый исследователь, С. Д. Лисициан осветил все стороны хозяйственной, общественной и духовной жизни армян указанных регионов, вскрыл их местную специфику и одновременно показал историко-культурную общность с армянским этносом в целом.

Одной из лучших работ С. Д. Лисициана по праву считаются также «Очерки этнографии дореволюционной Армении», где подытожены достижения советской армянской этнографии и с возможной полнотой представлены основные аспекты традиционной материальной и духовной культуры армянского народа.

Указанные работы в значительной степени были использованы при написании ряда глав раздела «Народы Армянской Советской Социалистической Республики»

лики» второго тома книги «Народы Кавказа» (в серии «Народы Мира»).

